ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացվել է ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ նաև Նախագիծ) **(փաստաթղթային կոդ՝ Կ-774-02.11.2020-ՏՏԳԲ-011/0),** որի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ է շարադրվում «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 30-րդ հոդվածը:

Նախագիծը ենթարկվել է ***իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության***:

Ստորև ներկայացվում են մասնագիտական փորձաքննության եզրակացությունները և Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՆԻ ՄՈՒԹԱՖՅԱՆ

02.11.2020թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-774-02.11.2020-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) իրավական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետահիրավական փորձաքննության բաժնում:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. Առաջարկում ենք Նախագծի վերնագրից հանել երկրորդ *«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ»* բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ *օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:*

2. Նախագծի 1-ին հոդվածում «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) լրիվ անվանման հիշատակումն առաջարկում ենք համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին. *«Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը»:*

3. Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 30-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված է հետևյալը. *«Համայնքի ղեկավարն ունի տեղակալ (տեղակալներ)»:*

Նշվածի կապակցությամբ հարկ է մեջբերել Օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն. *«Համայնքի ղեկավարն ունի մեկ առաջին տեղակալ, որը ավագանու անդամ է: Համայնքի ղեկավարը կարող է ունենալ ևս մեկ տեղակալ»*: Մեջբերված իրավակարգավորումը վերաբերում է համամասնական ընտրակարգով ընտրվող ավագանի ունեցող համայնքի ղեկավարի տեղակալներին:

Միաժամանակ նշենք, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. *«Քաղաքապետն ունի մեկ առաջին տեղակալ և կարող է ունենալ ևս <u>ոչ ավելի, քան 3</u> տեղակալ»:*

Վերոգրյալի համատեքստում հարկ է արձանագրել, որ և՛ համամասնական ընտրակարգով ընտրվող ավագանի ունեցող համայնքի ղեկավարի տեղակալների, և՛ քաղաքապետի տեղակալների առավելագույն թիվը հստակ կերպով կարգավորված է մեջբերված օրենքներով: Ուստի Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 30-րդ հոդվածի 1-ին մասում համայնքի ղեկավարի տեղակալների թիվ կամ առավելագույն թիվ չսահմանելը, այլ միայն անորոշ կերպով նշելը, որ համայնքի ղեկավարը կարող է ունենալ տեղակալ կամ տեղակալներ, չի բխում իրավական որոշակիության սկզբունքից, ինչպես նաև Օրենքի տրամաբանությունից: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք հստակեցնել քննարկվող կարգավորումը:

4. Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Համայնքի ղեկավարի տեղակալին պաշտոնի նշանակում է բացառությամբ՝* ***համամասնական ընտրակարգով ընտրված համայնքի ղեկավարի*** *տեղակալի և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը»:*

Նշվածի կապակցությամբ հարկ է մեջբերել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 104.1-ին հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն. *«Համամասնական ընտրակարգի դեպքում՝*

1) համայնքի ավագանիների ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով (…)»:

Նորմի վերլուծությունից բխում է, որ համամասնական ընտրակարգով անցկացվում են համայնքի ավագանիների ընտրությունները, և ոչ՝ համայնքի ղեկավարի:

Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 30-րդ հոդվածի 3-րդ մասի *«համամասնական ընտրակարգով ընտրված համայնքի ղեկավարի տեղակալի»* բառերը փոխարինել *«համամասնական ընտրակարգով ընտրվող ավագանի ունեցող համայնքի ղեկավարի տեղակալի»* բառերով:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Միաժամանակ, անհրաժեշտ է ներկայացված առաջարկությունների հիման վրա ապահովել Նախագծի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքին, «Տեղական ինքնակառավարման մասին» և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքներին:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՆԻ ՄՈՒԹԱՖՅԱՆ

Կատարողներ՝ Կ.Մանուկյան (հեռ.՝ 011-513-248),
Մ. Մնացականյան (հեռ.՝ 011-513-248)
02.11.2020թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՖՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՆԻ ՄՈՒԹԱՖՅԱՆ

Կատարողներ՝ Կ.Մանուկյան (հեռ.՝ 011-513-248)
Մ. Մնացականյան (հեռ.՝ 011-513-248)
02.11.2020թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-774-02.11.2020-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության ֆինանսատնտեսագիտական փորձաքննության բաժնում:

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

Նախագծով առաջարկվում է ամբողջությամբ վերախմբագրել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 30-րդ հոդվածը և սահմանել, որ քաղաքային բնակավայր ընդգրկող կամ միավորված համայնքի ղեկավարի տեղակալը համայնքի աշխարհազորային պայմանական բրիգադի ղեկավարն (հրամանատարն) է, իսկ գյուղական բնակավայրեր ներառող չմիավորված համայնքի ղեկավարի տեղակալը կամ միավորված համայնքի կազմում ներառված բնակավայրի վարչական ղեկավարը՝ համայնքի (բնակավայրի) աշխարհազորային պայմանական գումարտակի ղեկավարն է (հրամանատարը): Այս պաշտոնատար անձանց կողմից համապատասխան համայնքի (բնակավայրի) աշխարհազորային պայմանական բրիգադների և գումարտակների ղեկավարումն իրականացվում է աշխարհազորի պատրաստության ու կիրառման պլանների համաձայն: Նշված կարգավորմամբ իմպերատիվ սահմանվում է համայնքի ղեկավարի տեղակալի հաստիք ունենալու պահանջ, որը ներկայումս բացակայում է:

Ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրների տեսանկյունից հարկ ենք համարում նշել, որ Նախագծի 2-րդ հոդվածի համաձայն. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:», ինչը նշանակում է, որ համայնքապետարաններում համայնքի ղեկավարի տեղակալի նոր հաստիքների սահմանման դեպքում անհրաժեշտություն կառաջանա որոշ բյուջետային վերաբաշխումներ իրականացնել՝ համանքի ղեկավարի տեղակալի համար առնվազն մոտ 2 ամսվա աշխատավարձի ապահովման նպատակով (քանի որ 2020 թվականի համայնքային բյուջեներով այս ծախսերը նախատեսված չեն), ինչն էլ, սակայն, իրենից էական ֆինանսական ծանրաբեռնվածություն չի ենթադրի համայնքային բյուջեների համար:

Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրներ չի պարունակում:

Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագիծը ֆինանսատնտեսական հիմնախնդիրների տեսանկյունից լրամշակման կարիք չի զգում:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐԹՈՒՐ ԹԱՍԱՉՅԱՆ

(հեռ.՝ 011 513-668)

02.11.2020թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-774-02.11.2020-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության սոցիալ, կրթական, առողջապահական փորձաքննության բաժնում:

Սոցիալական փորձաքննության արդյունքները

Նախագծով առաջարկվում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրնքում փոփոխություն կատարել, և սահմանել, որ քաղաքային բնակավայր ընդգրկող կամ միավորված համայնքի ղեկավարի տեղակալը համայնքի աշխարհազորային պայմանական բրիգադի ղեկավարն (հրամանատարն) է, իսկ գյուղական բնակավայրեր ներառող չմիավորված համայնքի ղեկավարի տեղակալը կամ միավորված համայնքի կազմում ներառված բնակավայրի վարչական ղեկավարը՝ համայնքի (բնակավայրի) աշխարհազորային պայմանական գումարտակի ղեկավարն է (հրամանատարը):

Նշված կարգավորմամբ իմպերատիվ սահմանվում է համայնքի ղեկավարի տեղակալի հաստիք ունենալու պահանջ, որը ներկայումս բացակայում է:

Եզրահանգում

Նախագիծը սոցիալական հիմնահարցերի տեսանկյունից լրամշակման կարիք չի զգում:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ,

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարող՝ Մ. Դալլաքյան (հեռ.՝ 011-513-339)
02.11.2020թ.